



«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱԴՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Համագործակցային ուսուցումը
տարրական դասարաններում

Առարկան՝ Դասվար

Հետազոտող ուսուցիչ՝ Սաթենիկ Մոսինյան

Ուսումնական հաստատություն՝ Ծոճկանի Գոռ Խոլդինյանի
անվան միջն դպրոց ԴՈԱԿ

Երևան 2023

Բովանդակություն

| | |
|---|----|
| Ներածություն..... | 3 |
| Համագործակցային ուսուցման մեթոդներ..... | 5 |
| Հետազոտական մաս..... | 15 |
| Եզրակացություն..... | 19 |
| Գրականություն..... | 20 |

Ներածություն

Համագործակցային ուսուցումը ժամանակակից ուսուցման կազմակերպման ձև է, որն օգնում է ակտիվացնել երեխաներին, ստեղծել առանձնահատուկ աշխատանքի պայմաններ, նպաստում երեխայի զարգացմանը և մեծացնում գիտելիքի շրջանակը: Համագործակցային ուսուցման ընթացքում շատ կարևոր է խմբերի մեծությունը: Առավել արդյունավետ են համարվում 4-5 հոգուց բաղկացած խմբերը: Այդպիսի խմբերում աշակերտները առավել մեծ ակտիվություն դրսևորելու հնարավորություն ունեն:

Չորս հոգանոց խմբերում կարևորվում է յուրաքանչյուր աշակերտի անհատական պատասխանատվությունը և միաժամանակ ձևավորվում է կոլեկտիվ աշխատանքի մթնոլորտ:

Խմբի մեծությունը կախված է դասի նպատակից և ընտրված մեթոդից: Համագործակցային խմբերով աշխատանքը էապես

մեծացնում է աշակերտի ակտիվությունը դասապրոցեսում: Ակնհայտ է, որ հնարավոր չէ արդյունավետ սովորել միայն դիտողի, լսողի, պասիվ վիճակում գտնվելով: Աշակերտն ավելի լավ է սովորում, երբ ակտիվ մասնակցում է ուսուցման գործընթացի: Համագործակցային խմբերով ուսուցումը

ա. զարգացնում է խնդիրներ լուծելու կարողություն,

բ. ձևավորում է հաղորդակցման հմտություն,

գ. աշակերտները սովորում են միմյանցից,

դ. զարգանում է աշակերտների պատասխանատվության զգացումը,

ե. միմյանց հաշվետու լինելու հատկությունը՝ խմբի ընդհանուր հաջողությունն ապահովելու հարցում

զ. խթանում է թիմային աշխատանքը,

է. ապահով և նպաստավոր միջավայր է ստեղծում գիտելիքներն ու հմտությունները դրսևորելու համար:

Հետազոտության նպատակը.

Ուսումնասիրել համագործակցային ուսուցման գործընթացի արդյունավետությունը տարրական դասարաններում:

Հետազոտական աշխատանքի խնդիրները.

- բացահայտել համագործակցային ուսուցման առանձնահատկությունները,
- ներկայացնել համագործակցային ուսուցման կազմակերպման առավել արդյունավետ պայմաններ,

Ուսուցման կազմակերպման այս ձևի առանձնահատկությունները ներկայացրել են ամերիկացի գիտնականներ՝ Ջոնսոնները, Ջոն Բրունները, Սպենսեր Կազանը, ռուսներ՝ Ե. Ն. Իլինը, Վ. Ֆ. Շատալովան, Ի.Պ. Վոլկովը:

Համագործակցային ուսուցումը խթանում է սովորողների առաջադիմությունը: Ուսուցման կազմակերպման նման ձևը դասարանը դարձնում է ընդհանուր նպատակներ ունեցող փոքր խմբերի հավաքականություն, որտեղ հեշտությամբ կարելի է լուծել ամենաբարդ խնդիրները:

Գլուխ 1. Համագործակցային ուսուցման մեթոդները

Համագործակցային ուսուցման մեթոդներից են՝

- Աշակերտների թիմային առաջադիմություն
- Խճանկար
- Շրջագայություն պատկերասրահում
- Մտագրոհ
- Կանխագուշակում

- Երեք բանալի և մեկ կողպեք
- Հինգ թուղթանոց ազատ շարադրանք
- Խորանարդում
- Խմբային հետազոտություն

Աշակերտների թիմային առաջադիմություն մեթոդը մշակել է պրոֆեսոր Ռոբերտ Սլավինը: Այս մեթոդը խթանում է աշակերտների ուսման առաջընթացը:

Այս մեթոդի եռությունը կայանում է նրանում, որ յուրաքանչյուր սովորող ներդրում է ունենում թիմային աշխատանքում: Այս մեթոդը հնարավորություն է տալիս գնահատելու և՛ առանձին աշակերտներին, և՛ խմբերին:

Խճանկարը համագործակցային ուսուցման մեթոդներից է: Աշակերտները համագործակցային խմբերով միևնույն թեմայի շուրջ աշխատում են առանձին ուղղություններով: Նյութն ուսումնասիրում են հատվածաբար կամ տարբեր կողմերից, ապա միավորում են խմբային աշխատանքների արդյունքները:

Խճանկարի փուլերը 5-ն են.

1. Նյութի ուսումնասիրություն և տեղեկատվության հավաքում,
2. աշխատանք փորձագիտական խմբում,
3. աշխատանք ուսումնական խմբում,
4. ավարտական աշխատանք,
5. ամփոփում:

Աշակերտները բաժանվում են հենակետային խմբերի: Հենակետային խմբի յուրաքանչյուր անդամ դառնում է որևէ ենթաթեմայի «փորձագետ»: Փորձագետները ուսումնասիրում են իրենց ենթաթեման, հավաքում տեղեկատվություն:

Փորձագիտական խմբերի շակերտները համեմատում են և հարստացնում իրենց կյուլթերը:

Յուրաքանչյուր «փորձագետ» հենակետային խմբի մյուս անդամներին սովորեցնում է իր ենթաթեման:

Աշակերտներին անհատական թեմատիկ աշխատանք է հանձնում ամբողջ թեմայից: Արդյունքներն ամփոփվում են ըստ անհատական և խմբային ցուցանիշների:

Քայլ 1. Հենակետային խմբերի ձևավորումը

Խմբերի ձևավորման ժամանակ անհրաժեշտ է առաջնորդվել աշակերտների թիմային առաջադիմության մեթոդի մոտեցմամբ: Ձևավորել ինչպես առաջադիմությամբ, այնպես էլ աղջիկ-տղա իմաստով տարասեռ խմբեր: Խմբերը ձևավորելուց հետո առաջադրում են խմբային աշխատանքի կանոնները: Օրինակ՝

1. առաջադրանքի ավարտելուց հետո սովորողները պետք է մնան խմբի հետ այնքան ժամանակ, մինչև բոլորն ավարտեն,
2. խմբի յուրաքանչյուր անդամ պատասխանատու է, որ բոլորը հասկանան և կարողանան կատարել առաջադրանքը,
3. եթե կան անհասկանալի հատվածներ կամ հարցեր, ապա աշակերտը պետք դիմի իր թիմի անդամների օգնությանը, հետո, եթեկա կարիք՝ նաև ուսուցչին:

Կանոններն ընդունելուց հետո ուսուցիչը տալիս է առաջադրանքը: Հիմնական խմբերի անդամները, միմյանց աջակցելով, կարողում են ամբողջ կյուլթը, քննարկում են անհասկանալի հասկացությունները, հատվածները:

Քայլ 2. Փորձագիտական խմբերի ձևավորումը: Աշակերտները ծանոթանում են ամբողջ կյուլթին: Հիմնական խմբի յուրաքանչյուր անդամի առաջադրանք է տրվում: Տրվում է նաև փորձագիտական թերթիկը: Առաջադրանքը ստանալուց հետո աշակերտները կյուլթեր են հավաքում իրենց ենթաթեմայի վերաբերյալ: Այնուհետև փորձագիտական խմբի անդամների հետ կիսում են իրենց կյուլթերը, կատարում են ճշգրտումներ: Խմբի անդամները որոշում են նաև մեթոդները, մատուցման եղանակները, աղյուսակները, որոնք օգտագործելու են իրենց խմբերի անդամներին սովորեցնելու ընթացքում:

Կարևոր նշանակություն ունի նաև փորձագիտական թերթիկների մշակումը, որոնք օգնում են աշակերտներին կենտրոնանալ հիմնական հարցերի վրա:

Քայլ 3. Փորձագետները սովորեցնում են հենակետային խմբի անդամներին: Փորձագիտական խմբերի աշխատանքն ավարտելուց հետո սովորողները վերադառնում են հենակետային խմբեր: Յուրաքանչյուր փորձագետ սովորեցնում է իր ենթաթեման և պարզում, թե իր խմբի անդամները յուրացրե՞լ են այն:

Քայլ 4. Գնահատում

Խճանկարի ժամանակ գնահատումը իրականացվում է երեք մակարդակներով:

1. պարզել, թե խմբերը որքանով են արդյունավետ գործում, որքանով են բարելավվել սովորողների համագործակցային աշխատանք կատարելու հմտությունները:
2. պարզել, թե աշակերտները որքանով են առաջադիմել առանձին խնդիրներ ուսումնասիրելիս և դրանք իրենց դասընկերներին սովորեցնելիս:
3. պարզել, թե յուրաքանչյուր աշակերտ որքանով է յուրացրել ուսումնական նյութը, որքանով է առաջադիմել:

Խմբային գործընթացի գնահատում

Խմբային գործընթացը գնահատելիս պետք է պարզել, թե ինչքանով են սովորողները արդյունավետ աշխատել որպես խմբի անդամներ: Գործընթացը ներառում է խոսելու, լսելու, մտքերը կիսելու, խմբին օգնելու, աջակցելու հմտությունները:

Փորձագիտական աշխատանքի գնահատում

Գնահատվում են աշակերտների փորձագիտական աշխատանք կատարելու հմտությունները: Գնահատման այս ձևը կիրառելիս անհրաժեշտ է օգտագործել աշակերտների թիմային առաջադիմության մեթոդում ներկայացված գնահատման նմուշը:

Շրջագայություն պատկերասրահում: Այս մեթոդը «Խճանկար» մեթոդի տարատեսակ է: Նպատակն է՝ փոխանակել տեղեկություններ, մշակել գաղափարներ և կատարել անդրադարձ, զարգացնել լսելու, ինքնուրույն աշխատելու, քննադատաբար և ստեղծագործաբար մտածելու, ցածրաձայն խոսելու, աշխատանքի արդյունքը ներկայացնելու հմտություններ:

Ընթացքը

- Ուսուցիչն ուսումնական նյութը բաժանում է 4-6 մասերի : Յուրաքանչյուր խումբ պետք է ինքնուրույն ուսումնասիրի իրեն հանձնարարված մասը: Խմբերի թիվը կարող է մեծ լինել նյութի մասերի թվից: Նյութի նույն մասը կուսումնասիրի երկու խումբ:
 - Չորս հոգուց բաղկացած խմբերն աշխատում են ուսումնական նյութի իրենց հանձնարարված հատվածի վրա : Ստացված արդյունքները մշակում նկարի, կուլաժի, աղյուսակի, դիագրամի կամ գրաֆիկի տեսքով:
 - Պատրաստի աշխատանքները փակցվում են դասասենյակի պատերին՝ ստեղծելով «պատկերասրահ»:
 - Յուրաքանչյուր խմբից առանձնանում է 1-ական աշակերտ և կազմում նոր խումբ: Այսպես կազմում են 4 նոր խումբ:
 - Նոր խմբերը շրջում են պատկերասրահում, կանգ առնում յուրաքանչյուր ցուցանմուշի մոտ, և տվյալ խմբի այն անդամը, որը մասնակցել է այդ իսկ ցուցանմուշի ստեղծմանը՝ մանրամասն ներկայացնում է աշխատանքը, պատասխանում հարցերին:
- Շրջագայությունն ավարտվում է, երբ բոլոր խմբերը ծանոթանում են բոլոր աշխատանքներին:
- Պատկերասրահում շրջագայությունից հետո հիմնական խմբերն իրենց աշխատանքները համեմատում են մյուս աշխատանքների հետ և վերլուծում առաջացած հարցերը: [2;28]

Մտագրողը խմբային աշխատանքի պարզագույն, սակայն արդյունավետ մեթոդներից է: Մտագրողը խմբի անդամների միջև մտքերի փոխանակման ընթացքում գաղափարների ստեղծման և հարստացման եղանակներից մեկն է: Մինչ դասակարգել անցնելը, ուսուցիչը որոշակի ժամանակում անհատական կամ զույգերով կազմել է տալիս իրենց իմացած տեղեկատվությունը նոր հաղորդվելիք թեմայի վերաբերյալ: Ապա մտքերը գրի են առնվում գրատախտակին: Մտագրողի առանձնահատկությունն այն է, որ բացառվում է առաջադրված լուծումների մասին անել որևէ քննադատություն կամ տալ գնահատական: Անկաշկանդ մթնոլորտի ստեղծումը նպաստում է ստեղծագործական մտածողության զարգացմանը:

Մտքերը գրանցելուց հետո ընթերցվում է նոր նյութը, խմբով քննարկվում է ասվածը: Մեթոդի հիմնական նպատակը աշակերտների ուշադրությունը կենտրոնացնելն է, նոր գաղափարների <<հայտնաբերելը>>:

Երեք բանալի և մեկ կողպեք: Աշխատանքը կարելի է կատարել զույգերով, ինչպես նաև՝ խմբով: Այս մեթոդը կարելի է կիրառել ծավալուն դասերի իմաստի ընկալման փուլում: Այս մեթոդով աշխատելիս սովորողների մոտ ձևավորվում է ընտրություն կատարելու, գլխավորը երկրորդականից տարբերելու հմտություն, համագործակցելու, իր ընտրությունը հիմնավորելու կարողություն:

Հինգ թուղթանոց ազատ շարադրանք: Հինգ թուղթանոց ազատ շարադրանք մեթոդը կարելի է կիրառել և՛ դասի խթանման փուլում, և՛ կշռադատման փուլում՝ ելնելով դասի նպատակից և թեմայից: Թեման ընտրելուց հետո աշակերտները հինգ թուղթի ընթացքում պետք է շարադրեն իրենց մտքերը, ապա դադարեցնում են աշխատանքը և լսում մի քանի աշակերտի գրած շարադրանքը: [2; 15]

Խորանարդումը կշռադատման փուլում իրականացվող մեթոդական հնար է: Աշակերտներին մղում է պատասխանելու թեմային վերաբերվող վեց տարբեր հարցերի, որոնք պարզից աստիճանաբար բարդանում են:

Աշակերտներին բաժանելուց հետո ուսուցիչը յուրաքանչյուր խմբին տալիս է թեմային կապված որևէ առարկա և խորանարդ, որի նիստերից յուրաքանչյուրի վրա գրված է 6 առաջադրանքներից մեկը:

1. Նկարագրի՛ր այն, ինչ տեսնում ես:
2. Համեմատի՛ր այն:
3. Ինչի՞ մասին է քեզ ստիպում մտածել:
4. Ինչի՞ց է այն բաղկացած, պատրաստված:
5. Ինչպե՞ս կարող ես օգտագործել այն:
6. Այն լա՞վն է, թե՞ վատը:

Խմբերը ուշադիր դիտում են առարկան և միմյանց հետ համագործակցելով գրավոր պատասխանում են խորանարդի նիստերին գրված առաջադրանքներին, շարադրում իրենց մտքերը: Աշխատանքն ավարտելուց հետո խմբերը իրար են ներկայացնում

խորանարդի նիստերից յուրաքանչյուրի ուղղությամբ իրենց մշակած տարբերակը:Այնուհետև պատասխանում են ընկերների հարցերին:Այս մեթոդը կիրառելիս ուսուցիչը ևս գրի է առնում իր տարբերակները,ինչն էլ ոգևորում է աշակերտներին:[2,70]

Խմբային հետազոտության ժամանակ ուսումնասիրման համար ուսուցիչը ընտրում է մի խնդիր,որը հետաքրքրում է դասարանին և հնարավորություն տալիս այն դիտարկելու տարբեր տեսանկյուններից:Այնուհետև նորկայացնում է թեման:Աշակերտները ուսումնասիրում են նյութը,թեման բաժանում են ենթաթեմաների,կազմում ուսումնասիրության ծրագիր:Որոշ ժամանակ աշակերտները վարում են հետազոտական աշխատանքներ:Բոլոր աշակերտները մասնակցում են աշխատանքին:Խմբերը նախապատրաստում են իրենց ելույթները հանդես գալու համար:Ելույթները կարող են ներառել գրաֆիկական ցուցադրություններ, բացատրություններ:Խմբի ելույթից հետո մյուս խմբերը քննարկում են նիստի կատարած աշխատանքը:

Գլուխ 2. Հետազոտական մաս

Ստորև ներկայացնում եմ դասի պլանավորման մեկ օրինակ, օգտագործելով համագործակցային ուսուցման մեթոդիկան, որը կիրառել եմ երրորդ դասարանում:

Առարկա՝ «Մայրենի»

Դասարան՝ երրորդ

Թեմա՝ Հ. Արթեմյան. «Գարունն ո՞վ է բերել»

Դասի տեսակը՝ նոր նյութի հաղորդում

Նպատակը՝

. զարգացնել հաղորդակցական և համագործակցային կարողությունները

. ձևավորել ինքնակազմակերպման և ինքնադրսևորման հմտություններ

. զարգացնել բանավոր և գրավոր կապակցված խոսքը

. զարգացնել հասկանալով և արտահայտիչ կարդալու կարողությունը

Վերջնարդյունքները՝

. մասնակցի քննարկումների, լսի և հասկանա արտահայտած մտքերը

. բանավիճի որոշ հարցերի շուրջ

. կառուցի նկարագրական խոսք՝ օգտագործելով նորածանոթ բառերն ու արտահայտությունները

. բնութագրի գոյականը հատկանիշ ցույց տվող բառերով

Օգտագործվող մեթոդներ՝ «Կանխագուշակում», «Բանալի բառեր » , «Մտագրոհ», «Շրջագայություն պատկերասրահում»:

Դասի ընթացքը

Խթանման փուլ

Բանալի բառերի միջոցով աշակերտները փորձում են կանխագուշակել , թե ինչի մասին է լինելու դասանյութը (գարուն): Այնուհետև մտագրոհ մեթոդով աշակերտներին առաջադրվում է բացահայտել, թե գարուն բառն ինչ զուգորդումներ է առաջացնում իրենց մտապատկերում: Բոլոր պատասխանները գրառվում են (ծվլոց, արև, անձրև, քչքչան առվակ, ձնծաղիկ, արագիլ, կանաչ ծառ, կապույտ երկինք, ծիծեռնակ, խոտ, քամի):

Իմաստի ընկալման փուլ

Աշակերտները ընթերցում են բանաստեղծությունը՝ զուգահեռաբար ընդգծում այն բառերը, որոնք օգտագործվել են բանաստեղծության մեջ են (ծվլոց, արև, անձրև, քչքչան առվակ, ձնծաղիկ, արագիլ, կանաչ ծառ, կապույտ երկինք, ծիծեռնակ, խոտ, քամի):

Աշխատանք ենք կատարում բնագրի շուրջ՝ առաջադրելով ուղղորդող հարցեր.

* Ո՞րն է քչքչան բառի իմաստը:

* Ինչու՞ է սարյակը ծվծվում, խոտը՝ խշշում, ծառը՝ շրշում:

* Ինչու՞ է հովիկը մետաքսաթև, գարունը՝ շքեղ:

* Գարուն և կանաչ բառերը քանի՞ անգամ են գործածվել լեզվաաստեղծության մեջ, որ բառերի հետ:

* Կանաչ բառը ո՞ր բառերին է լրացնում: Ո՞ր բառերն են լրացնում գարուն բառին: Նշել այդ բառերին տրվող հարցերը:

Կատարել առաջադրանք 5-ը՝ հատկանիշ ցույց տվող բառերի գտնելու վերաբերյալ:

Համեմատել քամի, հովիկ, զեփյուռ բառերը:

Աշակերտներին բաժանում եմ 4-5 հոգանոց համագործակցային խմբերի: Յուրաքանչյուր խմբի համար կարդում եմ հանելուկ, որի պատասխանն էլ հենց խմբի անվանումն է լինելու:

Հանելուկներ

Ի՞նչն է հագնում կանաչ զմրուխտ,
Երեք ամսով գալիս մեզ մոտ,
Ծիլ ու ծաղկունք չորս կողմ փռում,
Թևին տալով՝ թռչում, գնում: ԳԱՐՈՒՆ

Ի՞նչն է, որ առանց ոտքի,
Ձիուց արագ վազել գիտի,
Ողջ աշխարհում խիստ օգտակար,
Անունը՝ կարճ, ինքը՝ երկար: ԳԵՏԱԿ

Թևեր ունի գույնզգույն,
Ծիլ ու ծաղիկ է սիրում,
Նա ձեզ ամենից ճանաչ,
Թռիչքը՝ կարճ, կյանքը՝ կարճ: ԹԻԹԵՌ

Գեղեցիկ է, հոտավետ,
Աճում է նա դաշտերում
ԵՎ իր բույրով մեզ գերում: ԾԱՂԻԿ

Առաջին խմբի հանձնարարում եմ Ա. Ղալաբյանի «Չարմանահրաշ բնաշխարհ» գրքից և «Ի՞նչ է, Ո՞վ է» հանրագիտարանի հատորներից տեղեկությունների հավաքեն բնագրում հանդիպող թռչունների և ծաղիկների մասին:

Երկրորդ խմբին տալիս եմ գուևավոր թղթեր, ծեփամածիկ, սոսինձ, մկրատ և հանձնարարում պատրաստել դասանյութի հերոսներին:

Երրորդ խմբին տալիս եմ գուևավոր մատիտներ , գրիչներ և հանձնարարում նկարել այգի, անտառ, ապա՝ համեմատել դրանք:

Չորրորդ խմբին հանձնարարում եմ գրել փոքրիկ շարադրություն գարնան վերաբերյալ՝ հարկ եղած դեպքում օգտագործելով նաև մտագրոհի ժամանակ առաջադրված բառերը:

Աշխատանքից հետո խմբերն իրենց կատարած աշխատանքները կամրացնեն պատին: Կկատարեն «Շրջագայություն պատկերասրահում»: Խմբերը հաջորդաբար կներկայացնեն իրենց աշխատանքները:

Յուրաքանչյուր խումբ գնահատվում է ըստ իր անդամների կատարած աշխատանքի՝ դրսևորելով մի փոքր զգուշություն, որպեսզի չանտեսվի որևէ աշակերտ:

Կշռադատման փուլ

Աշակերտները կգիտակցեն համագործակցության կարևորությունը խմբային աշխատանքում: Կսովորեն առաձևեր՝ Մի ծաղկով գարուն չի գա:

Մենակ մարդն անթև թռչուն է:

Մի ձեռքը ծափ չի տա:

Գյուղ կանգնի՝ գերան կկոտրի:

Կհիմնավորեն, թե ինչու՞ հերոսներից միայն մեկը չէր կարող բերել գարունը: Կորոշեն բանաստեղծության տրամադրությունը: Կձևակերպեն բանաստեղծության հիմնական միտքը:

Եզրակացություն

Ուսումնասիրելով համագործակցային ուսուցման մեթոդները, եկա եզրահանգման, որ ուսուցման կազմակերպման այս ձևի ճիշտ և տեղին կիրառումը հանգեցնում է ուսուցման արդյունավետության բարձրացմանը: Աշակերտները գիտելիքներ են ձեռք բերում ոչ միայն ուսուցչի օգնությամբ, այլ նաև ինքնուրույնաբար: Համագործակցային ուսուցումը նպաստում է

- աշակերտների ակտիվության բարձրացմանը
- միջանձնային հարաբերությունների ձևավորմանը
- հերթով մտքեր արտահայտելը
- միմյանց կարծիքներ լսելը և հարգելը
- խթանում է ստեղծագործական մտածողությանը
- աշակերտներ միմյանց սովորեցնելը
- խթանում է թիմային աշխատանքը

Ուսուցումը համագործակցային է այն դեպքում, երբ աշակերտները միասին, զույգերով կամ փոքր խմբերով աշխատում են մի ընդհանուր խնդիր լուծելու, մի ընդհանուր թեմա հետազոտելու կամ նոր միտք, նորարարություն իրականացնելու համար: Համագործակցային ուսուցումն ապահովում է մեծ առաջընթաց ուսուցման և ուսումնառության գործընթացում:

Գրականության ցանկ

1. Աստվածատրյան Մ., Ուսուցիչների վերապատրաստման գործընթացի կատարելագործումը, Այռեքս, Երևան 2003, 336 էջ:
2. Դալլաքյան Ա., Սարուխանյան Ս., Դիշաջայան Ն., Ուսուցման ժամանակակից մեթոդներ, հնարներ, վարժություններ, ք. Վանաձոր 2008թ., 101 էջ
3. Հովհաննիսյան Ա., Հարությունյան Կ., Խրիմյան Մ., Խաչատրյան Ս., Բայաթյան Ն., Ալեքսանյան Լ., Պուրուկուրու Վ., Համագործակցային ուսուցում, Երևան, «Անտարես» հրատ., 2006, 123 էջ:
4. Վարդումյան Ս., Ջաղինյան Ն., Հարությունյան Լ., Գարի Վարելա, ժամանակակից մանկավարժական մոտեցումներ, Երևան, «Նոյյան տապան» հրատ., 2005, 402 է ջ :